

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ

ՈՒՂԵՐԶ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանին

ռ ր ո շ ե ց

ընդունել հետևյալ ուղերձը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝
հրաժարական ներկայացնելու պահանջով:

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանին՝

Հաշվի առնելով թշնամու կողմից արցախա-ադրբեջանական հակամարտ գորքերի շփման գծի ողջ երկայնքով, ինչպես նաև խորը թիկունքում տեղակայված բնակավայրերը թիրախավորելով, 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված և նոյեմբերի 10-ին ավարտված ակտիվ պատերազմական գործողությունների հետևանքները,

Նկատի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիևի և Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից 2020թ. նոյեմբերի 09-ին եռակողմ հայտարարության ստորագրմանը հաջորդած հասարակական-քաղաքական ընդվզումները և դրանց հնարավոր հետևանքները,

Հաստատելով վերոգրյալ պայմաններում Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ երկրի հետագա զարգացման պատասխանատվությունը ստանձնելու բացարձակ անկարողությունը և անհնարինությունը,

Իր ուղերձն է հղում Հայաստանի Հանրապետության վարչապետին և կառավարության այլ անդամներին՝ հրաժարական ներկայացնելու պահանջով՝ ակնկալելով, որ ստեղծված իրավիճակում պատերազմում պարտված և հանրային վստահությունը սպառած վարչապետը կհեռանա, որից հետո խորհրդարանը կընտրի վարչապետ, ով, ձևավորելով անցումային կառավարություն, կկայունացնի իրավիճակը, կամրապնդի ներքին անվտանգությունը և համերաշխությունը, հիմք կստեղծի ողջամիտ ժամկետում արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու համար:

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Դ.ԽԱԺԱԿՅԱՆ

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Թ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ՈՒՂԵՐԶ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ

Երևանի ավագանին քաղաքական մարմին է և ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների զգալի հատված:

Լինելով այդպիսի բարձր մակարդակի ներկայացուցչական մարմին՝ մայրաքաղաքի ավագանին չի կարող անմասն մնալ քաղաքական լրջագույն գործընթացներից:

Երկրում սահմանված քաղաքական ճգնաժամը հանգուցալուծելու համար՝ առաջարկվում է հստակ ուղերձ հղել կառավարությանը՝ հրաժարականի պահանջով:

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Դ.ԽԱԺԱԿՑԱՆ

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Թ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ ընդունելու մասին» Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ՝ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ ընդունելու մասին» Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ՝ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Դ.ԽԱԺԱԿՅԱՆ

ԼՈՒՅՍ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Թ.ՎԱՐԴԱՆՅԱՆ